ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

# ՀՈՒՇԱԳԻՐ

համագործակցության մասին

ք. Ստեփանակերտ « » հունվարի 2022թ.

ԱՀ Մարդու Իրավունքների Պաշտպանի աշխատակազմը (այսուհետ՝ ՄԻՊ աշխատակազմ)՝ ի դեմս Մարդու Իրավունքների Պաշտպան Գեղամ Ստեփանյանի (այսուհետ՝ Պաշտպան), «Ճշմարտության և Արդարության Կենտրոն» կազմակերպությունը (այսուհետ՝ ՃԱԿ)՝ ի դեմս ՃԱԿ խորհրդի նախագահ Գոռ Մնացականյանի, Արցախի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍ)՝ ի դեմս ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի, Արցախի Պետական Համալսարանը (այսուհետ՝ ԱրՊՀ)՝ ի դեմս ռեկտոր Արմեն Սարգսյանի (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

## 1. ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են համագործակցել 2020 թվականի աշնանը Արցախի խաղաղ բնակչության դեմ սանձազերծված ադրբեջանական ագրեսիայի ընթացքում և դրա հետևանքով տուժած անձանց իրավունքների խախտումները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից հայկական հոգևոր-մշակութային հուշարձանների նկատմամբ վանդալիզմի դեպքերը հավաքագրելու, փաստագրելու և պահպանելու նպատակով փաստահավաք աշխատանքներ իրականացնելու շուրջ:

1.2. Համագործակցությունը ներառում է Արցախում գործող փաստահավաք խմբին, որի մասնակիցները ՃԱԿ-ի կողմից միջազգային իրավական չափանիշներին համապատասխան դասընթացներ և վերապատրաստումներ անցնելուց հետո իրականացնում են հարցազրույցներ տուժած անձանց հետ: Ձեռք բերված տվյալները կրում են գաղտնի բնույթ և ենթակա են հրապարակման միայն՝ վկայի համաձայնության դեպքում:

1.3. Համագործակցության նպատակն է ստեղծել մարդկության դեմ հանցագործությունների կենդանի հուշարձան:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***2.1. ՄԻՊ աշխատակազմը պարտավորվում է՝***

2.1.1. Տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություններ և ապահովել անհրաժեշտ մեխանիզմներ փաստահավաք աշխատանքների իրականացման համար:

2.1.2. Փաստահավաք խմբի անդամներին տրամադրել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մեկնարկած ԱՀ ՄԻՊ փաստահավաք առաքելության ընթացքում հավաքագրված տեղեկություններն ու տվյալները:

2.1.3. Աջակցել փաստահավաք խմբի բնականոն գործունեությանը՝ անհրաժեշտության դեպքում միջնորդ հանդիսանալ խմբի և Արցախի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

***2.2. ՃԱԿ-ը պարտավորվում՝***

2.2.1. Կատարել փաստահավաք խմբի անդամների ընտրություն՝ հարցազրույցների միջոցով: Զևավորվել աշխատանքային խմբեր և նշանակել թիմերի ղեկավարներին:

2.2.2. Իրականացնել միջազգային իրավական չափանիշներին համապատասխան դասընթացներ և վերապատրաստումներ:

2.2.3. Տրամադրել փաստահավաք աշխատանքների համար անհրաժեշտ նյութական միջոցները:

2.2.4. Պահպանել ձեռք բերված հարցազրույցների, փաստերի և տվյալների գաղտնիությունը:

***3.1. ԱրՊՀ-ն պարտավորվում է՝***

3.1.1. Իրազեկման աշխատանքներ տանել համալսարանի իրավագիտության բաժնի ուսանողների շրջանում իրականացվող ծրագրի մասին:

3.1.2. Ընդգրկել ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանողներին իրականացվող փաստահավաք աշխատանքներին:

3.1.3. Տրամադրել անհրաժեշտ աշխատանքային տարածք և ապահովել տեխնիկական միջոցներ վերապատրաստումների և դասընթացների անցկացման համար:

3.1.4. Որպես վերապատրաստման դասընթացներ, ուսանողներին տրամադրել որոշակի ակադեմիական ժամ և կամ այլ խրախուսական ճանաչում՝ հաշվի առնելով նրանց մասնակցությունը ՃԱԿ-ի

միջազգային իրավական չափանիշների դասընթացներին և վերապատրաստումներ անցնելուց հետո պահանջվող հարցազրույցները բավարար կերպով ավարտելը:

***4.1. ԿԳՄՍ-ն պարտավորվում է՝***

4.1.1. Նախարարության իրավասությունների շրջանակներում օժանդակել իրականացվող փաստահավաք աշխատանքներին:

## 3. ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 2 (երկու) տարի ժամկետով:

3.2. Սույն հուշագրի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ Կողմերը պայմանավորվում են քննարկել դրա գործողության արդյունքները, և փոխադարձ համաձայնության գալու դեպքում կնքել նույն առարկային ուղղված նոր հուշագիր:

3.3. Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ: Այն դեպքում, երբ կողմերից մեկը միակողմանիորեն որոշի դադարեցնել այս Հուշագիրը, Հուշագիրը ուժի մեջ կմնա մնացած կողմերի համար:

## 4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կամրագրվեն առանձին արձանագրությամբ: Արձանագրությունն ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և կհանդիսանա սույն Հուշագրի բաղկացուցիչ մասը:

4.2. Սույն հուշագիրը կնքված է հայերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
Պաշտպան՝ Գեղամ Ստեփանյան

Ստորագրություն _____

«Ճշմարտության և Արդարության Կենտրոն»
կազմակերպություն
Նախագահ՝ Գոռ Մնացականյան

Ստորագրություն _____

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Նախարար՝ Լուսինե Ղարթխանյան

Ստորագրություն _____

Արցախի պետական համալսարան
Ռեկտոր՝ Արմեն Սարգսյան

Ստորագրություն _____